Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՑԵՆՏՐԱԼԻԶՄԻ ՄԱՍԻՆ

Գ. Մ. ԱՅՎԱԶՅԱՆ

Ավելի քան երեք տարի է անցել ՍՄԿԿ XXIV համագումարից, որն ամփոփելով մեր առաջընթացի գլխավոր արդյունքները, արձանագրեց՝ Սովետական Միությունում կառուցվել է զարգացած սոցիալիստական հասարակարգ։ Պատմական այդ բնագիծը սովետական ժողովուրդը նվաճել է կուսակցության ղեկավարությամբ։ Կոմունիստական շինարարության արդի ժամանակաշրջանը բնութագրվում է կուսակցության ղեկավար դերի ու նշանակության հետագա աճմամբ։ Կոմունիստական կուսակցության ղեկավար դերի հարցը, ինչպես ընդգծվեց ՍՄԿԿ XXIV համագումարում, հեղափոխական շարժման, նոր հասարակարգի կառուցման արմատական խնդիրներից է։ Այսօր այն դարձել է մարքսիստ-լենինյանների և ռևիզիոնիստների միջև մղվող պայքարի հանգուցակետը։ Բուրժուական պատմաբանները, ռևիզիոնիստները կատաղի հարձակումներ են գործում բանվոր դասակարգի կուսակցության ղեկավար դերի մասին մարքս-լենինյան ուսմունքի դեմ, կուսակցության կազմակերպական հիմունքների ու առաջին հերթին դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքի դեմ։ Նրանք հայտարարում են, որ իբր թե կուսակցական կարգապահությունն անհամատեղելի է քննարկման և քննադատության ազատության հետ, որ մեր կուսակցության շարքերում դեմոկրատիան ձևական բնույթ է կրում։ Նրանք փորձում են ցույց տալ, որ, իբր, դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը կաշկանդում է կոմունիստների նախաձեռնությունը և ակտիվությունը, որ, իբր, Լենինը պաշտպանում էր միայն ցենտրալիզմը, անտեսում՝ դեմոկրատիզմը։ Այս պայմաններում տեղին է նորից անդրադառնալ դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքին, այն հարցին, թե Վ. Ի. Լենինը ինչպե՞ս է հիմնավորել այդ սկզբունքը, որո՞նք են նրա բնորոշ կողմերը, ի՞նչ դեր ունի այդ սկզբունքը մեր կուսակցության կյանքում, ցույց տալ, որ զարգացման բոլոր փուլերում կուսակցությունը գործել է դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքով, ներկուսակցական դեմոկրատիայի ծավալման հիման վրա։

Մեր հարյուրամյակի արշալույսին, երբ դրվում էին կուսակցության հիմնաքարերը, Վ. Ի. Լենինը ձևափոխելով Արքիմեդի հայտնի դարձվածքը, ասել է. «Տվեք մեզ հեղափոխականների կազմակերպություն և մենք շուռ կըտանք Ռուսաստանը»։ Վ. Ի. Լենինն ինքն ստեղծեց այդ կազմակերպությունը՝ բոլշևիկների կուսակցությունը, որը երեք հեղափոխությունների բովով մեր երկրի աշխատավորներին գրոհի տարավ ընդդեմ ցարիզմի ու բուրժուազիայի և համաշխարհային պատմական նշանակություն ունեցող հաղթանակի հասավ։

Վ. Ի. Լենինը, պաշտպանելով ու զարգացնելով Մարքսի ու Էնգելսի դրույթները կոմունիստական կուսակցության անհրաժեշտության, նրա գերի ու խնդիրների վերաբերյալ և հենվելով ռուսական բանվորական շարժման փորձի վրա, մշակեց մի կուռ ուսմունք բանվոր դասակարգի հեղափոխական կուսակցության մասին։ «Մեզ հարկավոր են,— գրում էր նա,— նոր կուսակցություններ, ուրիշ կուսակցություններ։ Մեզ հարկավոր են այնպիսի կուսակցություններ, որոնք շարունակ իրական կապ ունենան մասսաների հետ և որոնք կարողանան ղեկավարել այդ մասսաներին»[1]։ Մի ուրիշ առիթով Վ. Ի. Լենինն ընդգծել է, որ հաղթանակը իմպերիալիզմի հանդեպ, սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցումը կարելի է իրագործել միայն կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։ Միայն բանվոր դասակարգի քաղաքական կուսակցությունն է ի վիճակի, մատնանշում էր նա, միավորել, կազմակերպել ու ղեկավարել պրոլետարիատի և բոլոր աշխատավորների գործունեությունը։ Առանց դրա պրոլետարիատի դիկտատուրան անիրագործելի է։ Ուստի բանվոր դասակարգի կուսակցության ստեղծումը պատմական անհրաժեշտություն է, օբյեկտիվ օրինաչափություն։

Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի այդ կուսակցությունը, որո՞նք են նրա կազմակերպական կառուցվածքի հիմնական սկզբունքները։ Այս հարցերի պատասխանը նույնպես գտնում ենք Վ. Ի. Լենինի աշխատություններում։ Նա հիմնավորեց այն հիմնական դրույթը, որ կոմունիստական կուսակցության կառուցման ղեկավար սկզբունքը դեմոկրատական ցենտրալիզմն է։ Կարելի է առանց չափազանցության ասել, որ դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը կուսակցական շինարարության միջուկն է, նրա ուղն ու ծուծը։

Դեմոկրատական ցենտրալիզմը եղել ու մնում է որպես ՍՄԿԿ կազմակերպական կառուցվածքի ղեկավար սկզբունքը։ Այդ սկզբունքի հիման վրա կուսակցությունը ծավալում է իր բազմակողմանի գործունեությունը։ Այն կուսակցության կազմակերպվածության, միասնության հիմքն է։ Վ. Ի. Լենինը բացահայտել է դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքի էությունն ու բովանդակությունը, նրա բնորոշ կողմերը, կիրառման ձևերն ու մեթոդները։ Նա այսպես է բնութագրել դեմոկրատական ցենտրալիզմի էությունը. «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը կազմակերպված է դեմոկրատորեն։ Այդ նշանակում է, որ կուսակցության բոլոր գործերը վարում են, ուղղակի կամ ներկայացուցիչների միջոցով, կուսակցության բոլոր անդամները, հավասար իրավունքներով և առանց որևէ բացառության, ընդ որում կուսակցության բոլոր պաշտոնատար անձերը, բոլոր ղեկավար կոլեգիաները, բոլոր հիմնարկները ընտրովի են, հաշվետու, փոփոխելի»[2]։

Դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքն ունի երկու կողմ. դեմոկրատիզմ և ցենտրալիզմ։ Ինչպե՞ս են այդ երկու կողմերը դրսևորվում կուսակցության գործունեության մեջ, ի՞նչ նշանակություն ունի դրանցից յուրաքանչյուրը կուսակցության համար։

Դեմոկրատիզմը կուսակցության գործունեության մեջ նախ և առաջ դրսևորվում է այն բանում, որ կուսակցության ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական բոլոր ղեկավար օրգանները, ներքևից մինչև վերև, ընտրովի են։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 285։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 11, էջ 546։

Վ. Ի. Լենինի բնորոշմամբ՝ դեմոկրատիզմն ամենից առաջ ընտրական սկզբունքի կիրառումն է։ «Այս նշանակում է, որ կուսակցության բոլոր անդամներն են ընտրում պաշտոնատար անձանց, կոմիտեների անդամներին և այլն, որ կուսակցության բոլոր անդամներն են քննարկում ու լուծում պրոլետարիատի քաղաքական կամպանիայի հարցերը, որ կուսակցության բոլոր անդամներն են որոշում կուսակցական կազմակերպությունների տակտիկայի ուղղությունը»[3]։ Առանց ընտրական իրավունքի,— մատնանշել է Վ. Ի. Լենինը,— դեմոկրատիայի վերաբերյալ զեղեցիկ խոսքերը մնում են միայն ֆրազյորություն։ Կուսակցության անդամները ոչ միայն ընտրում են կուսակցության ղեկավար օրգաններ, այլև վերահսկում են նրանց գործունեությունը՝ ընտրովի օրգանների հաշվետվության միջոցով։ Ուստի դեմոկրատիզմի անքակտելի մասը կուսակցական օրգանների հաշվետվությունն է ընտրող կոմունիստների առջև՝ ժողովներում, կոնֆերանսներում և համագումարներում։ Առանց այդպիսի հաշվետվության ընտրովիության սկզբունքը, ըստ էության, անիմաստ է։ Լսելով և քննարկելով կուսակցական օրգանի հաշվետվությունը, իրազեկ դառնալով և գնահատելով նրա գործունեությունը, կոմունիստները կարող են հեշտությամբ լուծել այն հարցը, թե ո՞ւմ վստահել ղեկավարումը, արդյո՞ք արժանի են, որ նրանք, ովքեր մինչ այդ գլխավորում էին կազմակերպությունը, նորից ընտրվեն։

Դեմոկրատիզմը, այնուհետև, դրսևորվում է այն բանում, որ կուսակցության ղեկավար օրգանների աշխատանքը կենսագործվում է կոլեկտիվ ղեկավարման սկզբունքի հիման վրա, որը կուսակցության անդամների, բոլոր կոմունիստների համար հնարավորություն է ընձեռում ակտիվորեն մասնակցելու կազմակերպության գործունեությանը, համակուսակցական հարցերի քննարկմանը։ Կոլեկտիվ ղեկավարման սկզբունքը կարևոր տեղ է գտել Վ. Ի. Լենինի աշխատություններում։ Դեռևս բոլշևիզմի առաջացման արշալույսին նա նշել է. «Քաղաքական պայքար մղելն անհնարին է առանց այն բանի, որ ամբողջ կուսակցությունը արտահայտվի քաղաքականության բոլոր հարցերի մասին... Հեղափոխական ուժերի կազմակերպումը, նրանց կարգապահությունը... անհնարին են առանց այդ բոլոր հարցերը կենտրոնական օրգանում քննելու... առանց գործը վարելու որոշ ձևեր և կանոններ մշակելու...»[4]։ «...Տասնյակ միլիոնավոր ստեղծագործողների խելքն,— ասում էր Վ. Ի. Լենինը,— ստեղծում է ինչ-որ անչափելիորեն ավելի բարձր բան, քան ամենամեծ ու հանճարեղ նախատեսումը»[5]։ Ղեկավարման կոլեգիալությունը առաջին հերթին իրագործվում է նրանով, որ կուսակցության քաղաքական գիծը միշտ էլ որոշվում է կոլեգիալ մարմինների՝ համագումարների, կոնֆերանսների, Կենտկոմի պլենումների կողմից։ Լենինը մշտապես հոգ էր տանում, որ այդ մարմինները գումարվեն կանոնավոր կերպով, կանոնադրությամբ սահմանված ժամկետներին, որ հրատապ հարցերը քննարկվեն համակողմանիորեն, գործարար մթնոլորտում, կոլեկտիվ ջանքերով։ Հայտնի է, թե որքան կանոնավոր էին անցկացվում կուսակցության համագումարները Վ. Ի. Լենինի կենդանության օրոք։ Սովետական իշխանության առաջին յոթ դժվարին

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 10, էջ 638—639։
4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 4, էջ 272։
5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 581։

տարիներին դրանք գումարվում էին ամեն տարի, նրանցում քննարկվում էին կուսակցության և սովետական երիտասարդ պետության գործունեության գլխավոր, հրատապ խնդիրները։

Վ. Ի. Լենինը ինքը կոլեկտիվության սկզբունքի խստագույն պահպանման օրինակ էր ցույց տալիս։ Չնայած նրա հանդեպ տածած անսահման վստահությանը, նա երբեք իրեն թույլ չէր տալիս կոլեգիալ մարմինների փոխարեն հարցերը միանձնյա լուծել։ «Դուք սխալվում եք,— Ա. Իոֆեին ուղղված նամակում գրում էր Վ. Ի. Լենինը,— կրկնելով (բազմիցս), թե «Կենտկոմը՝ դա ես եմ»... Ինչու ուրեմն այդպես չղայնանալ և դրել միանգամայն անկարելի, միանգամայն անկարելի արտահայտություն, որ իբր Կենտկոմը՝ դա ես եմ։ Դա գերհոգնածություն է»[6]։ Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ ինքը միայն Կենտկոմի անդամներից մեկն է և չի կարող միանձնյա լուծել հարցերը կուսակցության փոխարեն։

Մեր կուսակցության դեմոկրատիզմը բնութագրվում է նաև նրանով, որ նա իր աշխատանքում լայնորեն կիրառում է քննադատությունն ու ինքնաքննադատությունը։

Դեմոկրատիզմն անբաժանելի է ցենտրալիզմից։ Իսկ ինչպե՞ս է դրսևորվում ցենտրալիզմը մեր կուսակցության աշխատանքում։ Ղեկավարման մեջ ցենտրալիզմը նախ և առաջ արտահայտվում է այն բանում, որ կուսակցությունն ունի մեկ բարձրագույն օրգան՝ կուսակցության համագումարը, իսկ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում՝ Կենտրոնական կոմիտեն։ Նրանց որոշումները պարտադիր են բոլոր կոմունիստների, բոլոր կազմակերպությունների համար։ Ցենտրալիզմը ենթադրում է միասնական կարգապահություն, որը պարտադիր է ու միատեսակ ինչպես ղեկավար, այնպես էլ շարքային աշխատողների համար։ Գործնականում դա նշանակում է, որ կոմունիստները պարտավոր են անշեղորեն կենսագործել կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, նրա որոշումները, պահպանել կուսակցական կյանքի նորմաները։ Եվ վերջապես, ցենտրալիզմ նշանակում է, որ փոքրամասնությունը պետք է ենթարկվի մեծամասնության կամքին։ Միայն համախմբված, միասնական և կարգապահ կուսակցությունը կարող է կատարել կազմակերպչի ու ղեկավարի իր դերը։

Մեր կուսակցությունը, ինչպես հայտնի է, ստեղծվում էր խորը ընդհատակում, ցարական իշխանությունների մշտական սպառնալիքների ու բռնությունների պայմաններում։ Գործը բարդանում էր նաև նրանով, որ սկզբնական շրջանում ռուսական սոցիալ-դեմոկրատիան մասնատված էր խմբակների, տիրապետում էր խմբակայնությունը, տարընթացությունը, տնայնագործականությունը։ Այդպիսի դժվարին պայմաններում հարկ եղավ ժամանակավորապես սահմանափակել դեմոկրատիզմը և առաջին պլանի վրա մղել կենտրոնացումն ու կոնսպիրացիան։ Այս գիծը Վ. Ի. Լենինը հիմնավորել է իր վաղ շրջանի աշխատություններում։ 1899 թ. նա պահանջում էր սահմանել կենտրոնական օրգանի միջոցով «կուսակցության յուրաքանչյուր անդամի պատասխանատվությունը ամբողջ կուսակցության առաջ»[7]։ 1902 թ. Վ. Ի. Լենինը նշում էր, որ տեղական կազմակերպությունները պետք է ենթարկվեն

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 45, էջ 60։
7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 4, էջ 272։

կենտկոմին, որը պետք է ուղղություն տա և վերահսկի նրանց աշխատանքին[8]։ «Լայն դեմոկրատիզմը» ինքնակալության խավարի մեջ, ժանդարմական ընտրանքի տիրապետության օրով, լոկ դատարկ և վնասակար խաղալիք է... «դեմոկրատական լայն սկզբունք» կիրառելու փորձերը ոստիկանության համար միայն հեշտացնում են կազմակերպությունները լայնորեն տապալելը...»[9]։ Չնայած բազմաթիվ դժվարություններին ու խոչընդոտներին, կուսակցությունը չէր հրաժարվում դեմոկրատիզմից, հավատարիմ էր մնում դեմոկրատական նորմաներին, դրանք իրագործում այն չափով, որ չափով հնարավոր էր ստեղծված պայմաններում։ «Միայն բանվորական ս.-դ. կուսակցությունն է գործնականում իրականացնում դեմոկրատիզմը կազմակերպության մեջ, չնայելով բոլոր մեծ դժվարություններին,— նույնիսկ այն ծանր զոհերին, որոնց հետ այդ կապված է անլեգալ կուսակցության համար»[10]։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո դառնալով ղեկավարող կուսակցություն, ՍՄԿԿ անշեղորեն կենսագործում է ներկուսակցական դեմոկրատիայի ծավալման գիծ։

Դեմոկրատական ցենտրալիզմի միջոցով կուսակցությունը բարձրացնում է իր անդամների ակտիվությունը, նրանց եռանդը, գիտելիքները տղղում ընդհանուր նպատակին, ներկուսակցական լայն դեմոկրատիան զուգակցում կազմակերպվածության, խստագույն կարգապահության, կուսակցության կամքի և գործողությունների միասնության հետ։

Ինչպես նշվեց, դեմոկրատական ցենտրալիզմն ունի երկու կողմ։ Սակայն այս բաժանումը հարաբերական է։ Դեմոկրատիզմը և ցենտրալիզմը հանդես են գալիս միաժամանակ, դիալեկտիկական սերտ միասնության մեջ։ Չի կարելի ցենտրալիզմը հակադրել դեմոկրատիային։ Դրանք պայմանավորված են միմյանցով, լրացնում են միմյանց, առանց մեկի չկա և մյուսը։ Չափից ավելի կենտրոնացման դեպքում կուսակցությունը ենթարկվում է աղանդավորական, բյուրոկրատական կազմակերպության վերածվելու վտանգին։ Կուսակցության անդամները այս դեպքում դառնում են տոկ կատարողներ, իսկ հակառակ դեպքում՝ կուսակցությունը վերածվում է բանավեճային ակումբի, որի անդամները միայն զբաղվում են քննադատությամբ, վիճաբանություններով, քննարկում են տարբեր պրոբլեմներ, բայց չունեն կամքի միասնություն։ Եթե կուսակցության յուրաքանչյուր անդամ գործի այնպես, ինչպես ինքն է ուզում, հաշվի չառնի մեծամասնության ընդունած որոշումները, անտեսի կուսակցական մարմինների ցուցումները, ապա չի լինի ոչ կամքի, ոչ էլ գործողությունների միասնություն, մինչդեռ առանց դրանց, հասկանալի է, կուսակցությունը չի կարող լուծել իր առջև դրված խնդիրները։ Ցենտրալիզմի և դեմոկրատիզմի ճիշտ զուգակցումը ապահովում է կուսակցության մարտունակությունը։ Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ դեմոկրատիզմը և ցենտրալիզմը միասնական են։ «Մենք մեր մամուլում միշտ պաշտպանում ենք ներկուսակցական դեմոկրատիան։ Բայց մենք երբեք չենք արտահայտվում կուսակցության ցենտրալիզացիայի դեմ։ Մենք կողմնակից ենք դեմոկրատական ցենտրալիզմին»[11]։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 293։
9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 638։
10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 11, էջ 537։
11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 538։

Ասվեց, որ կոմունիստական կուսակցությունը կարևոր նշանակություն է տալիս քննադատության և ինքնաքննադատության ծավալմանն ու զարգացմանը։ Դա օրինաչափություն է կոմունիստական կուսակցության համար։ Առանց քննադատության չի կարող լինել իսկական հեղափոխական, մարտական կուսակցություն։ Վ. Ի. Լենինը բազմիցս ընդգծել է, թե ինչ նշանակություն ունի սկզբունքային քննադատությունը մեր կուսակցության գործունեության համար։ Այս կապակցությամբ տեղին է վերհիշել առաջնորդի մտքերը. «Քաղաքական կուսակցությունը արժանի չէր լինի հարգանքի, եթե նա համարձակություն չունենար իր հիվանդությունը կոչելու նրա իսկական անունով, անողոք դիագնոզ դնելու և բուժման միջոցներ որոնելու»[12]։ 1920 թ. «Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» գրքում, ընդհանրացնելով մեր կուսակցության և արտասահմանում նոր ստեղծված երիտասարդ կոմունիստական կուսակցությունների փորձը, Վ. Ի. Լենինը գրել է. «Քաղաքական կուսակցության վերաբերմունքը դեպի իր սխալները կուսակցության լրջության և իր դասակարգի ու աշխատավոր մասսաների վերաբերմամբ իր պարտականություններն իրապես կատարելու ամենակարևոր և ամենաճիշտ չափանիշներից մեկն է։ Բացահայտորեն ընդունել սխալը, բացահայտել նրա պատճառները, վերլուծել այդ սխալը ծնող իրադրությունը, ուշադրությամբ քննարկել սխալն ուղղելու միջոցները,— ահա դա է լուրջ կուսակցության հատկանիշը...»[13]։

Վ. Ի. Լենինը կուսակցական ղեկավար աշխատողներին, կոմունիստներին խորհուրդ էր տալիս լռության չմատնել սխալները, այլ պարզաբանել դրանք հրապարակորեն, կարողանալ ճշմարիտն ասել, որքան էլ այն դառը լինի, բուժել կուսակցությունը ուղղամիտ ու առողջ քննադատությամբ։ Վ. Ի. Լենինը գտնում էր, որ կոմունիստների կուսակցության համար սխալները չեն, որ վտանգավոր են։ Շատ ավելի երկյուղալի և վտանգավոր է սխալների մեջ համառելը, կեղծ ամոթը, որը խանգարում է խոստովանել և ուղղել դրանք։ 1915 թ. Վ. Ի. Լենինը հայտարարեց, որ բոլշևիկները բավականաչափ ուժեղ են, որպեսզի բացահայտ կերպով քննադատեն իրենք իրենց, որպեսզի առանց վարանելու սխալն անվանեն սխալ, իսկ թուլությունը՝ թուլություն։ Յոթ տարի հետո ելույթ ունենալով ՌԿ(բ)Կ XI համագումարում, Վ. Ի. Լենինը արեց այսպիսի եզրակացություն. «Մինչև այժմ կործանված բոլոր հեղափոխական կուսակցությունները կործանվել են այն բանից, որ մեծամտել են և չեն կարողացել տեսնել, թե ինչո՞ւմ է իրենց ուժը և վախեցել են խոսել իրենց թուլությունների մասին։ Իսկ մենք չենք փորձանվի, որովհետև չենք վախենում խոսել մեր թուլությունների մասին և կսովորենք հաղթահարել այդ թուլությունները»[14]։

Վ. Ի. Լենինի աշխատություններում հիմնական ցուցումներ կան ոչ միայն քննադատության և ինքնաքննադատության անհրաժեշտության ու կարևորության մասին, այլև նրա բովանդակության ու բնույթի մասին։ Ժամանակն է, ասում էր նա, որ մենք դնենք քննադատության ոչ միայն ազատության, այլև նրա բովանդակության հարցը։ Վ. Ի. Լենինը ուղղակի հայտարարում էր, որ կոմունիստներին սազական չէ դատարկ, առանց որոշակի բո-

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 407։
13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 52։
14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 367։

վանդակության քննադատությունը, անհիմն մեղադրանքները, քննադատությունը հանուն քննադատության։ Նա խորհուրդ էր տալիս կուսակցական գործին օգնող քննադատությունը տարբերել խորթ քննադատությունից։ Կուսակցական քննադատությունը պետք է ելնի կուսակցության ծրագրից ու կանոնադրությունից, նրա որոշումներից։ Իսկ եթե քննադատությունն ուղղված է կուսակցության այդ հիմքերի դեմ, նպատակ ունի կազմալուծելու աշխատանքը, ապա այն պետք է մերժել։ «Ամեն ոք ազատ է գրելու և խոսելու այն բոլորը, ինչ նա կամենում է, առանց ամենափոքր սահմանափակումների։ Բայց ամեն մի ազատ միություն (որոնց թվում՝ կուսակցությունը) նմանապես ազատ է դուրս քշելու այնպիսի անդամներին, որոնք կուսակցության ֆիրմայից օգտվում են հակակուսակցական հայացքներ քարոզելու համար... Կուսակցականի և հակակուսակցականի միջև սահմանը որոշելու համար ծառայում է կուսակցական ծրագիրը, ծառայում են կուսակցության տակտիկական բանաձևերն ու նրա կանոնագրությունը»[15]։

Քննադատությունը արդյունավետ է այն դեպքում, երբ ոչ միայն նշվում են սխալները, այլև, որը և գլխավորն է, բացահայտվում են դրանց առաջացման արմատները, գործնական պայքար է ծավալվում դրանք վերացնելու համար։ Քննադատելիս չպետք է միայն նկատել թերությունները։ Շատ կարևոր է, որ զարգացնելով քննադատությունը, չկորցնել ծառերի հետևում անտառը տեսնելու, առանձին թերությունների հետևում ընդհանուր պատկերը տեսնելու ընդունակությունը։

Վ. Ի. Լենինը պայքարում էր պարզ և անկեղծ քննադատության համար, ընդդեմ մանրախնդիր խայթոցների։ Նա չէր հանդուրժում բոլոր նրանց, ովքեր «քննադատության ազատության» կեղծ քողի տակ ցանկանում էին սասանել մեր հասարակարգի հիմքերը, քննարկման ազատությունը հասկանում էին որպես անվերջ խոսակցություններ։ «Մենք,— գրում էր Վ. Ի. Լենինը,— կուսակցության ներսում թույլատրում ենք կարծիքների ազատություն, բայց որոշ սահմաններում... մենք պարտավոր չենք ձեռք ձեռքի տված գնալու այն ակտիվ քարոզիչների հետ, որոնց հայացքները ժխտվում են կուսակցության մեծամասնությունից»[16]։

Քննադատությունը պետք է ճշմարտացի լինի։ Շիտակ և սկզբունքային քննադատությունն այն անհրաժեշտ ու կարևորագույն տարրն է, առանց որի հնարավոր չեն ոչ ներկուսակցական դեմոկրատիայի զարգացումը, ոչ կուսակցական կարգապահության ամրապնդումը, ոչ էլ կոմունիստների ակտիվության բարձրացումը։ Վ. Ի. Լենինը վճռականորեն հանդես էր գալիս բոլոր նրանց դեմ, ովքեր «քննադատության» պատրվակով զրպարտում են ուրիշներին։ Նա պահանջում էր, որ քննադատությունը ամբողջությամբ վերցրած ճշմարտացի ու ազնիվ լինի։ «Գազվատոցի բոլոր գործերում ու անձնական մեղադրանքներում նրանք, ովքեր այդպիսի մեղադրանքներ են առաջ քաշում, դատարանի հանդեպ չներկայացնելով ստույգ մեղադրանքներ, համարվում են զրպարտիչներ,

նրանք, ովքեր իրենց վիրավորված են համարում նման մեղադրանքներով, կարող են դիմել դատարանին»[17]։

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 10, էջ 42—43։
16 Վ. Ի. Լենին, Երկեր հ. 15, էջ 509։
17 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 42, էջ 9։

Դեմոկրատական ցենտրալիզմը, ինչպես բազմիցս ընդգծել է Վ. Ի. Լենինը, ենթադրում է կուսակցական ամուր կարգապահություն։ Կարգապահության մարքսիստական հասկացողությունը Վ. Ի. Լենինը բացահայտել է իր վաղ շրջանի աշխատություններում։ «Մեր մերձավորագույն խնդիրը» հոդվածում, որ Վ. Ի. Լենինը գրել է դեռևս անցյալ հարյուրամյակի վերջին, նա գրում է. «Հեղափոխական ուժերի կազմակերպումը, նրանց կարգապահացումը և հեղափոխական տեխնիկայի զարգացումն անհնարին են առանց այդ բոլոր հարցերը կենտրոնական օրգանում քննելու, առանց գործը վարելու որոշ ձևերը և կանոնները մշակելու, առանց սահմանելու— կենտրոնական օրգանի միջոցով —կուսակցության յուրաքանչյուր անդամի պատասխանատվությունը ամբողջ կուսակցության առաջ»[18]։ Այսպիսով, կարգապահությունը, մարքսիստական ըմբռնմամբ, ենթադրում է մի կողմից կուսակցական կյանքի կարևորագույն հարցերի կոլեկտիվ քննարկում, մյուս կողմից՝ անձնական պատասխանատվություն, ընդունած որոշումները կենսագործելու համար։ Մի փոքր ավելի ուշ Վ. Ի. Լենինն ավելի կոնկրետացրեց այդ դրույթը կուսակցական կարգապահության մասին, ընդգծելով, որ կուսակցության բոլոր անդամները պարտավոր են ենթարկվել կուսակցական օրգանների որոշումներին։ «Գործողությունների միասնականություն, քննարկման և քննադատության ազատություն— ահա մեր որոշումը»[19]։

Կուսակցությունը կենդանի օրգանիզմ է։ Հնարավոր է, որ կուսակցության որոշ անդամներ, այս կամ այն հարցը քննարկելիս, համաձայն չլինեն մեծամասնության հետ։ Ինչպե՞ս պետք է վարվել այս դեպքում։ Մինչև որոշում կայացնելը կուսակցության բոլոր անդամները լիակատար ազատություն ունեն քննադատելու և քննարկելու, առաջարկություններ մտցնելու, իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունն արտահայտելու քննարկվող հարցի վերաբերյալ։ Այդ պատճառով տարբեր երանգների, տարբեր կարծիքների ու տեսակետների պայքարը կուսակցության մեջ անխուսափելի է և անհրաժեշտ, դրանց շուրջը «կարելի է և պետք է վիճել»[20]։

Կուսակցական կարգապահությունը կոմունիստից չի պահանջում հրաժարվել սեփական համոզմունքից, եթե այն հակասության մեջ չէ կուսակցության գլխավոր գծի, մարքսիստական-լենինյան տեսության հետ։

Բայց այն բանից հետո, երբ ավարտվում է հարցի քննարկումը և մեծամասնությունն ընդունում է համապատասխան որոշում, այն պարտադիր է յուրաքանչյուր կոմունիստի համար։ «Ձեռնահաս օրգանների վճռից հետո,— գրում էր Վ. Ի. Լենինը,— մենք բոլորս, կուսակցության անդամներս, գործում ենք որպես մի մարդ»[21]։ Մի այլ առիթով նա անդրադառնալով քննարկման և քննադատության ազատության հարցին, նշել է, որ այդ ազատությունը անսահմանափակ լինել չի կարող, որ այն պետք է լինի որոշ շրջանակներում, բխի կուսակցության ծրագրից ու կանոնադրությունից։ «...Քննադատության ազատություն, լիակատար ու ամենուրեք, քանի որ դրանով չի խախտվում որոշակի գործողության միասնությունը,— և անթույլատրություն որևէ քըն-

18 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 4, էջ 272։
19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 11, էջ 395։
20 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 443։
21 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 11, էջ 398։

նադատության, որը խախտում է կամ դժվարացնում կուսակցության որոշած գործողության միասնությունը»[22]։ Գործը պետք է կազմակերպել այնպես, որ «անխուսափելի վեճերը, կարծիքների անխուսափելի պայքարը չայլասերվեն և չվերածվեն իրար հայհոյելու, բամբասանքի, խծբծանքի, զրպարտության»[23]։ Կուսակցական կարգապահությունը, որպես դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքի անքակտելի մաս, պարտադիր է կուսակցության անդամների, նրա բոլոր կազմակերպությունների համար։ Կուսակցության կարգապահությունը չպետք է հակադրել կուսակցական դեմոկրատիային, առանց մեկի չկա մյուսը։

Վ. Ի. Լենինը կարևոր նշանակություն էր տալիս կուսակցական ինֆորմացիային՝ և՛ վերևից, և՛ ներքևից։ Նա կենտրոնի ուժը տեսնում էր «կուսակցական մեքենայի բոլոր անիվների ու անիվիկների վերաբերյալ նրա իրազեկ լինելու»[24] մեջ։ Առանց լրիվ և ճիշտ ինֆորմացիայի, ասում էր նա, «մենք ո՛չ աչքեր ունենք, ո՛չ ականջներ, ո՛չ էլ ձեռքեր»[25]։ «Որպեսզի կենտրոնը կարողանա ո՛չ միայն խորհուրդ տալ, համոզել, վիճել... այլ իրոք ղեկավարել նվագախումբը, դրա համար անհրաժեշտ է, որ ճշտապես հայտնի լինի, թե ով, որտեղ և որ ջութակն է վարում, որտեղ և ինչպես որ գործիքով է սովորել նվազել և սովորում է, ով, որտեղ և ինչու է սխալ նվագում (երբ երաժշտությունն սկսում է ականջ ծակել), և դիսոնանսը շտկելու համար ում, ինչպես և ուր պետք է տեղափոխել...»[26]։ Այսպիսով, տեղական կուսակցական կազմակերպությունները պետք է մշտական, ճանոնավոր ինֆորմացիա հաղորդեն բարձրագույն մարմիններին։

Նման ինֆորմացիայի միջոցով կուսակցության ղեկավար մարմիններն իրազեկ են դառնում գործերի վիճակին տեղերում և դրա հիման վրա վերլուծում իրադրությունը, օգնում տեղական կազմակերպություններին ընդունելու ճիշտ որոշումներ։ Բայց դա հարցի մի կողմն է միայն, որը բավարար համարել չի կարելի։ Շատ կարևոր է նաև ինֆորմացիան վերևից, երբ կուսակցության ընտրովի մարմինները, այդ թվում Կենտկոմը, իրենց կատարած աշխատանքի, իրենց պլանների, մտադրությունների մասին մշտապես տեղյակ են պահում կոմունիստներին, տեղական կազմակերպություններին, ժողովրդին։ Դա մասսաների հետ կապերն ամրապնդելու արդյունավետ միջոցներից մեկն է։ Նման պրակտիկան, ինչ խոսք, տեղական կազմակերպություններին հնարավորություն է տալիս ոչ միայն իմանալու կուսակցության կանխագծումները, այլև անհրաժեշտ պայմաններ է ստեղծում նրանց կողմից կուսակցության առաջադրած քաղաքական ու անտեսական կարևորագույն հարցերը քննարկելու և լուծելու համար։

Կոմունիստական կուսակցությունը խնամքով զարգացնում, զարգացնում և անշեղորեն կենսագործում է դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքը, նրա հիման վրա բարձրացնում սկզբնական կազմակերպությունների մարտունակությունը, ապահովում իր ղեկավար դերը։

---

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 10, էջ 562։
23 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 615։
24 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 308։
25 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 42, էջ 388։
26 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 309։

«Ներկուսակցական դեմոկրատիայի զարգացումը,— ՍՄԿԿ XXIV համագումարում ասաց Լ. Ի. Բրեժնևը,— անբաժանելի է կուսակցական կարգապահության ամրապնդումից։ Փորձը հաստատում է, որ կուսակցության ուժը, նրա գործունակությունը մեծապես որոշվում է նրանով, թե որքան հետևողականորեն և ճշտորեն է կենսագործվում դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը։ Մարքս-լենինյան կուսակցության համար հավասարապես վնասակար են ինչպես անարխիստական անկարգապահությունը, որը ներկայացվում է դեմոկրատիայի փոխարեն, այնպես էլ բյուրոկրատական կենտրոնացումը, որը կասեցնում է կոմունիստների նախաձեռնության և ակտիվության զարգացումը»[27]։

ՍՄԿԿ Կենտկոմի գործունեությունը վառ վկայությունն է այն բանի, թե ինչպիսի հետևողականությամբ նա կյանքի է կոչում ներկուսակցական դեմոկրատիայի, կոլեկտիվ ղեկավարման, դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքները։ Կենտկոմի կանոնավոր հրավիրվող պլենումները աչքի են ընկնում գործարարությամբ, սկզբունքայնությամբ։ Կոմունիստների պատասխանատվության բարձրացման, կուսակցական և աշխատանքային կարգապահության ամրապնդման ուղիների մասին խոսվեց ՍՄԿԿ Կենտկոմի 1973 թ. դեկտեմբերյան պլենումում։ Նման հարցեր քննարկվեցին նաև Հայաստանի կոմկուսի Կենտկոմի 1973 թ. ապրիլյան և նոյեմբերյան պլենումներում։ Փորձը ցույց է տալիս, որ կուսակցության ուժը որոշվում է նրանով, թե որքան հետևողականորեն է կենսագործվում դեմոկրատական ցենտրալիզմը։

Դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքը ունի միջազգային նշանակություն։ Կոմունիստական ու բանվորական կուսակցությունները այդ սկզբունքը համարում են իրենց կազմակերպական կառուցվածքի հիմքը։ Այդ մասին շատ որոշակիորեն ասված է կոմունիստական և բանվորական կուսակցությունների կանոնադրությունների մեջ։ Բուլղարիայի կոմունիստական կուսակցության կանոնադրության մեջ, օրինակ, նշված է. «Կուսակցության կազմակերպական կառուցվածքի հիմնական սկզբունքը դեմոկրատական ցենտրալիզմն է»[28]։ Հունգարիայի սոցիալիստական կուսակցության կանոնադրությունը արձանագրում է, որ կուսակցությունը կառուցված է դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքով[29]։ Ուրուգվայի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Արիսմենդին դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը համարում է օրինակելի ամեն մի կոմունիստական կուսակցության համար[30]։ Այս նույն գիծը պաշտպանվում է նաև մյուս կոմունիստական ու բանվորական կուսակցությունների կողմից, նրանց ծրագրային փաստաթղթերում։

Դեմոկրատական ցենտրալիզմը եղել ու մնում է ՍՄԿԿ կազմակերպական կառուցվածքի, նրա գործունեության ղեկավար սկզբունքը։

---

27 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցումը ՍՄԿԿ XXIV համագումարին, Երևան, 1971, էջ 149—150։

28 «Вопросы истории КПСС», 1973, № 11, стр. 87.

29 Նույն տեղում։

30 Նույն տեղում, էջ 88։

В. И. ЛЕНИН О ДЕМОКРАТИЧЕСКОМ ЦЕНТРАЛИЗМЕ

Г. М. АЙВАЗЯН

Резюме

Демократический централизм — руководящий принцип организационного строения и деятельности Коммунистической партии. Этот принцип всегда был и остается объектом острой борьбы между марксистами-ленинцами и представителями ревизионизма. Ревизионисты утверждают, будто в КПСС централизм «взял верх» над демократией, и в рядах нашей партии демократия носит формальный характер. Они пытаются «оторвать» централизм от демократии, противопоставить их.

В своих трудах В. И. Ленин обосновал необходимость демократического централизма, его место и значение для партии, показал, что между централизмом и демократией существует тесная связь. Сила партии во многом определяется тем, насколько последовательно проводится в жизнь принцип демократического централизма.